Ինչու՞ ընտրել մեզ՝ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն իր գործունեությունը ծավալում է ավելի քան 23 տարի և ապահովագրական շուկայում ունի իր կայուն դիրքը: Ընկերության հաջողության գրավականը մասնագիտական բարձր որակավորում ունեցող անձանցից կազմված թիմն է և թիմի ներսում տիրող դրական մթնոլորտը: Ընդառաջ գնալով ժամանակի մարտահրավերներին՝ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ–ն իր թիմակիցների համար մշտապես ստեղծում է աշխատանքային բարենպաստ պայմաններ՝ ժամանակ առ ժամանակ տարբեր բնույթի բենեֆիթներ տրամադրելով:

Պաշտոնը՝ Բժշկական փորձաքննությունների բաժնի մասնագետ – Ընկերությունը փնտրում է բանիմաց, աշխատասեր և բարեհամբույր թեկնածու բժշկական փորձաքննությունների բաժնի մասնագետի թափուր հաստիքը համալրելու նպատակով:

Վարչություն՝ Անձնական ապահովագրության հայցերի վարչություն

Տարածաշրջան՝ ՀՀ, ք. Երևան, Արամի 3 և 5

Պահանջներ՝

- Բարձրագույն կրթություն, ցանկալի է տնտեսագիտական,
- Հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուների իմացություն,
- MS office իմացություն,
- Թիմում աշխատելու ունակություն,
- Բարդ իրավիճակներում արագ և ինքնուրույն կողմնորոշվելու ունակություն,
- Սթրեսակայունություն,
- Մտքերը գրագետ, հստակ արտահայտելու կարողություն,
- Պատասխանատվության զգացում,
- Հաճախորդների հետ շփման ունակություն,
- Աշխատանքային փորձի առկայությունը կդիտվի որպես առավելություն:

Աշխատավարձ՝ պայմանագրային

Աշխատանքային գրաֆիկ՝ լրիվ աշխատանքային օր՝ 09:00-18:00

Պարտականություններ՝

- Անձնական ապահովագրության հայցերի գծով հաճախորդների սպասարկում, հաճախորդներին ապահովագրության պայմանագրերին համապատասխան Ապահովագրողին դիմելու կարգի, ընթացակարգերի վերաբերյալ խորհրդատվության տրամադրում,
- Առողջության ապահովագրության գծով ներկայացված փոխհատուցման դիմումների ընդունում, ուսումնասիրություն, անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրում, համաձայն ընթացակարգի ցանցում դիմումի փաթեթի ստեղծում, LiteSoft ծրագրում դիմումին համապատասխան ուղեգրի ստեղծում, փոխանցում բժիշկ-փորձագետին,
- Առողջության ապահովագրության գծով ներկայացված փոխհատուցման դիմումների գծով ԲԿ–ների, հաճախորդների հետ մշտական հաղորդակցության ապահովում,
- Դժբախտ պատահարների, կրիտիկական հիվանդությունների, Աջակցության ապահովագրության գծով ներկայացված փոխհատուցման դիմումների ընդունում, ուսումնասիրություն, անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրում, համաձայն ընթացակարգի ցանցում դիմումի փաթեթի ստեղծում, փոխանցում բժիշկ-փորձագետին,
- ԱՊՊԱ պատահարների անձնական վնասի գծով դիմումների ընդունում, ուսումնասիրություն, անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրում, ASWA հարթակում համապատասխան գործարքների կատարում,
- ԱՊՊԱ պատահարների անձնական վնասի գծով հայցերի շրջանակներում տուժողների, ԲԿ–ների, Բյուրոյի, այլ ապահովագրական ընկերությունների հետ մշտական հաղորդակցության ապահովում, որոշումների վերաբերյալ պարզաբանումների տրամադրում,

- Armed ծրագրով սոցիալական փաթեթի շահառուների տարեկան կանխարգելիչ բուժզննման հայցերի գծով ներկայացված նախնական և վերջնական հայտերի ուսումնասիրություն, հատուցման կամ մերժման որոշման կայացում՝ Armed ծրագրով համապատասխան գործողությունների կատարմամբ,
- Սոցիալական փաթեթի շահառուների պայմանագրի տարեկան կանխարգելիչ բուժզննման հայցերի գծով ԲԿ–ների հետ հաղորդակցության ապահովում,
- Սոցիալական փաթեթի շահառուներին տարեկան կանխարգելիչ բուժզննման հայցերի, պայմանագրի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:

Ընտրելով մեզ ի՞նչ արտոնություններ և հնարավորություններ կստանաք Դուք.

- Առողջության ապահովագրության փաթեթ,
- Ընտանիքի անդամներին ապահովագրելու հնարավորություն,
- Տարեկան տրամադրվող վարձատրվող Day off–երի և Time off-երի հնարավորություն,
- Ընկերության կողմից սպասարկվող Visa Classic քարտ,
- Ծննդյան և նախատոնական օրերին աշխատանքը շուտ ավարտելու հնարավորություն,
- Ընկերության ներսում դասընթացների կազմակերպում, մասնագիտական փորձի փոխանակման մշակույթի առկայություն,
- Պարբերաբար թիմի որակավորման բարձրացմանն ուղղված սեմինարների կազմակերպում,
- Սոցիալ–մշակութային բնույթի միջոցառումների, թիմային հավաքույթների, կորպորատիվների կազմակերպում:

Անհրաժեշտ փաստաթղթեր և դիմելու կարգը՝

Եթե համապատասխանում եք մեր պահանջներին և ցանկանում եք համագործակցել մեզ հետ, կարող եք Ձեր ինքնակենսագրականն ուղարկել **hr@silinsurance.net** էլեկտրոնային հասցեին (թեմա դաշտում պարտադիր նշել պաշտոնի անվանումը):

Վերջնաժամկետ՝ 30.04.2024թ.: